Պարույր Սևակ

Եվ ուրիշ ոչինչ

Ձորից թռչելիս,
Ժայռից ցատկելիս,
Որպես կենդանի - շնչող արարած,
Նա խեղանդամվում
Ու տնքտնքոցով քարշ տալով ոտը՝
Փոշի է հանում ճանապարհներին...
-Իսկ մենք պարզապես կոչում ենք... քամի՛.
Եվ ուրիշ ոչի՞նչ:
Նա էլ, մարդու պես,
Ունի ամոթի զգացումը նույն,
Դրա համար էլ
Հագուստ է գործում խոտից ու թփից,
Որպեսզի ծածկի իր մերկությունը...
-Մենք ընդամենը կոչում ենք... առո՛ւ,
Եվ ուրիշ ոչի՞նչ:
Առասպելական հսկա մարջաններ,
Որ վզնոց դարձած՝
Զուգում են վիզը պատըշգամբների,
Մի բան էլ ավե՞լ -
Ունեն համ ու հոտ...
-Իսկ մենք կոչում ենք... պղպե՛ղ կամ տաքդե՛ղ.

Եվ ուրիշ ոչի՞նչ:
Ջուգված ավազի դեղին կապրոնով
Եվ անձեռագործ նեյլոնով կանաչ՝
Հնչեցնում է նա իր ջինջ սոպրանոն...
-Իսկ մենք պարզապես կոչում ենք... աղբյո՛ւր.
Եվ ուրիշ ոչի՞նչ:
Մի մե՞ծ, երփներանգ յուղաներկ կտավ,
Որ ժամեր հետո փոխվում է հանկարծ
Սև ու միագույն խորանկարի...
Եվ ուրիշ ոչի՞նչ:
Հրա՞շք իսկական,
Կոչում ենք... գլուխ:
Լեցուն գաղտնարա՞ն,
Անվանում ենք... սիրտ:
Մի քայլող աշխա՞րհ,
Մարդ ենք հորջորջում...
Եվ... վա՞յ ինձ ու ձեզ.
Այսքանից հետո
Մենք մեզ կոչում ենք նաև... բանաստե՞ղծ...

18.XII.1959թ.
Թիֆլիս